



ՀՈԳՇ. Տ. ԽԱԴ ԱՐԶ. ՃՈՒՆՏՈՒՐԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Խադ Արքեպիսկոպոս Ճուռտուրեան, աւագանի անունով Արմէն, ծնած է Պէյրութ 1967ին, գաւակն է Հանընցի Սարգիս եւ Լուսին Ճուռտուրեաններու: Նախնական ուսումը ստացած է Պէյրութի Ազգ. Սահակ Մեսրոպեան վարժարանին մէջ:

1979ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը, որուն վեցամեայ շրջանը աւարտած է 1985ին: 1983ին, Ուրար կրելու իրաւունք կը ստանայ օրուայ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Գարեգին Արք. Գազանեանէ: 1985ին կը վերադառնայ Լիբանան հետեւելու կեանքի ազատ ասպարէզին:

1991ին, կը վերադառնայ Երուսաղէմ շարունակելու Ընծայարանի քաթինը: 1993ին Վարդանանցի տօնին Սարկաւազ կը ձեռնադրուի ձեռամբ՝ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: 1994 Մայիս ամսուն, հօրը ծանր հիւանդութեան պատճառով կը ստիպուի հեռանալ ընտանիքին սատարելու մտադրութեամբ: 1999ին, իր դիմումին վրայ վերստին կ'ընդունուի որպէս միաբան ծառայելու սրբատեղեաց մէջ:

6 Օգոստոս 2000ին, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: